




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«21» հուլիս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ  Ս. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-41/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.04.2016թ. թիվ 1/73-1/11890-16 գրությամբ ներկայացված «Հայկ-Մար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01217216) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Հայկ-Մար» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Միաժամանակ, ՀՀ ֆինանսների նախարարությունը տրամադրել է տեղեկատվություն, որի համաձայն՝ «Հայկ-Մար» ՍՊԸ-ն 07.05.2015թ. դրությամբ ունեցել է 223 675 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն:

Կենտրոնը ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը 30.03.2016թ. թիվ 01/04.1/1248-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 գրությամբ ներկայացված «Հայկ-Մար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը 12.04.2016թ. թիվ 1/73-1/11890-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Հայկ-Մար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Հայկ-Մար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Հայկ-Մար» ՍՊԸ-ն 18.08.2015թ. Կենտրոնին ներկայացրած գրությամբ հայտնել է, որ 2015թ. մայիսի 8-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ՝ ներկայացնելով ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի տարածքային հարկային տեսչության 14.05.2015թ. տեղեկանքի պատճենը:

Ընկերության ներկայացուցիչը, մասնակցելով 05.05.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ՍՅ-ԳԲԽ-41/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

3. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 10.08.2015թ. թիվ 01/13.1/1872-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/9-15/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Հայկ-Մար» ՍՊԸ-ի վերաբերյալ Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ «հայտը ներկայացնելու ամսաթիվ» սյունակում նշվել է մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ստորագրման ամսաթիվը՝ 07.05.2015թ., մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է **08.05.2015թ.**:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն կրկին հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը, որին ի պատասխան 19.05.2015թ. վերջինս տրամադրել է երկրորդ եզրակացությունը, որի համաձայն՝ «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/9-15/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «Հայկ-Մար» ՍՊԸ-ն **2015թ. մայիսի 8-ի** դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն:

4. ՍՑ-ԳԲԽ-41/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 12.04.2016թ. թիվ 1/73-1/11890-16 գրությամբ ներկայացված «Հայկ-Մար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կողմից կազմակերպված «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/9-15/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով «Հայկ-Մար» ՍՊԸ-ն **08.05.2015թ.** հայտ է ներկայացրել:

2. Մասնակիցը հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել

է, որ **հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

3. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ «հայտը ներկայացնելու ամսաթիվ» սյունակում նշել է մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ստորագրման ամսաթիվը՝ 07.05.2015թ., մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է **08.05.2015թ.:**

4. Պատվիրատուն կրկին հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը, որին ի պատասխան 19.05.2015թ. վերջինս տրամադրել է երկրորդ եզրակացությունը, որի համաձայն՝ «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/9-15/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «Հայկ-Մար» ՍՊԸ-ն **2015թ. մայիսի 8-ի** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն:

5. «Հայկ-Մար» ՍՊԸ-ն 18.08.2015թ. Կենտրոնին ներկայացրած գրությամբ, ինչպես նաև 05.05.2016թ. ժամը 17:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-41/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին ներկայացրել է Շենգավիթի տարածքային հարկային տեսչության 14.05.2015թ. տեղեկանքը, որի համաձայն՝ Ընկերությունը **2015թ. մայիսի 8-ի** դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

6. Կենտրոնը ուսումնասիրելով գործում առկա փաստաթղթերը 30.03.2016թ. թիվ 01/04.1/1248-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 24.06.2015թ. թիվ 1/73-1/16391-15 գրությամբ ներկայացված «Հայկ-Մար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

7. ՀՀ ֆինանսների նախարարությունը 12.04.2016թ. թիվ 1/73-1/11890-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Հայկ-Մար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

5. ՍՑ-ԳԲԽ-41/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Նախարարության 09.09.2015թ. թիվ 1/73-1/25045-15 և 12.04.2016թ. թիվ 1/73-1/11890-16 գրությունները, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի 10.08.2015թ. թիվ 01/13.1/1872-15 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայկ-Մար» ՍՊԸ-ի 18.08.2015թ. գրությունը, Շենգավիթի տարածքային հարկային տեսչության 14.05.2015թ. տեղեկանքը, հայտնում է հետևյալը.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը 10.08.2015թ. թիվ 01/13.1/1872-15 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/9-15/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Հայկ-Մար» ՍՊԸ-ի վերաբերյալ Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ «հայտը ներկայացնելու ամսաթիվ» սյունակում նշվել է մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի ստորագրման ամսաթիվը՝ 07.05.2015թ., մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է **08.05.2015թ.**:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն կրկին հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը, որին ի պատասխան 19.05.2015թ. վերջինս տրամադրել է երկրորդ եզրակացությունը, որի համաձայն՝ «ՀԱՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/9-15/15» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «Հայկ-Մար» ՍՊԸ-ն **2015թ. մայիսի 8-ի** դրությամբ (հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն:

«Հայկ-Մար» ՍՊԸ-ն 18.08.2015թ. Կենտրոնին ներկայացրած գրությամբ հայտնել է, որ 2015թ. մայիսի 8-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ՝ ներկայացնելով Շենգավիթի տարածքային հարկային տեսչության 14.05.2015թ. տեղեկանքը, որի

համաձայն՝ Ընկերությունը 2015թ. մայիսի 8-ի դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Այսպիսով, «Հայկ-Մար» ՍՊԸ-ի կողմից 08.05.2015թ. հայտի N 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում, քանի որ Ընկերությունը համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.05.2015թ. տրամադրած եզրակացության, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (08.05.2015թ. դրությամբ) չի ունեցել ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային վճարների գծով, ուստի Կենտրոնը գտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 12.04.2016թ. թիվ 1/73-1/11890-16 գրությամբ ներկայացված «Հայկ-Մար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հետևաբար Կենտրոնը առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 12.04.2016թ. թիվ 1/73-1/11890-16 գրությամբ ներկայացված «Հայկ-Մար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01217216) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բոլորքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՅ-ԳԲԽ-41/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝

Հ. Այունց

Մ. Կատվալյան

Լ. Հովակիմյան